ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

1 օգոստոսի 1997 թվականի N6
քաղ. Երևան

Էլեկտրական էներգիայի սակագների մասին

Ղեկավարվելով «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքով և հաշվի առնելով էներգետիկայի բնագավառի սուբյեկտների անվտանգ և արդյունավետ շահագործման, պահպանման, հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքի ամորտիզացիոն հատկացումների, հիմնանորոգման և կապիտալ ներդրումների ծախսերի, վարկերի սպասարկման ծախսերի փոխհատուցման և շահույթի ապահովման անրաժեշտությունը.

1. Սահմանել էլեկտրական էներգիայի արտադրության, հաղորդման և բաշխման հետևյալ սակագները՝ ներառյալ ԱԱՀ.

ա) Որոտանի ՀԷԿ-երի համալիր՝ 1.37 դրամ/կՎտժ,
բ) Էներգահամակարգի սեփականաշնորհված փոքր ՀԷԿ-եր՝ 13 դրամ/կՎտժ,
գ) Հրազդանի ՋԷԿ՝ 15.48 դրամ/կՎտժ,
դ) Երևանի ՋԷԿ՝ 16.26 դրամ/կՎտժ,
ե) ՀԱԷԿ՝ 12.37 դրամ/կՎտժ,
զ) «Հայէներգո» ՊՁ կողմից բաշխիչ ցանցերին վաճառք /միջինացված/՝ 15.34 դրամ/կՎտժ,
է) 35 կՎ և բարձր լարման սպառողներին վաճառք՝ 16 դրամ/կՎտժ,

ը) 6(10) կՎ լարման անմիջական սպառողներին վաճառք՝ 20 դրամ/կՎտժ,
թ) 0.4 կՎ լարման սպառողներին վաճառք՝

- բնակչության յուրաքանչյուր բաժանորդի ամսական մինչև 100 կՎտժ օգտագործված էլեկտրաէներգիայի համար՝ 15 դրամ/կՎտժ,

- բնակչության յուրաքանչյուր բաժանորդի ամսական 100 - 250 կՎտժ օգտագործված յուրաքանչյուր կՎտժ էլեկտրաէներգիայի համար՝ 22 դրամ/կՎտժ,

- բնակչության յուրաքանչյուր բաժանորդի ամսական 250 կՎտժ -ից ավել սպառած և 0.4 կՎ լարման այլ սպառողների էլեկտրաէներգիայի յուրաքանչյուր կՎտժ էլեկտրաէներգիայի համար՝ 25 դրամ/կՎտժ:

Ընդունել ի գիտություն, որ Սևան-Հրազդանյան ՀԷԿ-երի կասկադի սակագինը՝ 4.21 դրամ/կՎտժ, սահմանվել է ՀՀ էներգետիկայի հանձնաժողովի 1997թ. հունիսի 30-ի նիստի որոշմամբ (արձանագրություն հ.4):

2. Մասնավոր փոքր ՀԷԿ-երի սակագների մասին որոշումը կկայացվի լրացուցիչ ուսումնասիրություններից հետո՝ մինչև ս.թ. օգոստոսի 20-ը:

3. Սույն որոշմամբ սահմանված սակագները ուժի մեջ են մտնում 1997թ.սեպտեմբերի 1-ից: Փոքր ՀԷԿ-երի սակագների գործողության ժամկետն է մինչև 1998թ. հուլիսի 1-ը:

4. Սահմանել բարձր լարման սպառողներին ժ. 23^{00}-7^{00} էլեկտրաէներգիայի սպառման համար զեղչ սակագին՝ 12 դրամ/կՎտժ:

5. ՀՀ էներգետիկայի հանձնաժողովին՝ երկամսյա ժամկետում վերանայել ՀՀ էներգետիկայի նախարարության կողմից հաստատված «Էներգահամակարգի բեռի գրաֆիկի հարթեցման նպատակով բարձր լարման սպառողների համար օրվա ժամերով տարբերակված էլեկտրաէներգիայի սակագնի անցման կարգը» և կայացնել համապատասխան որոշում:

ՀՀ էներգետիկայի
հանձնաժողովի նախագահ՝ **Վ. Մովսեսյան**